ՀՀ Արմավիրի մարզ

Ք. Արմավիր, Շահումյան 20

Մովսես Սիլիկյանի անվան N6 հիմնական դպրոց

Տնօրեն՝ Հասմիկ Գասպարյան

Կերպարվեստի ուսուցիչ՝ Արմինե Սարդարյան

«ԿԵՐՊԱՐՎԵՍՏ» ԱՌԱՐԿԱՅԻ ԽՄԲԱԿԻ ԾՐԱԳԻՐ

ՄԻՋԻՆ ԴՊՐՈՑ

ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

«Կերպարվեստ» առարկայի խմբակի ծրագիրը ներկայացված է աղյուսակի տեսքով:

Աղյուսակները կազմված են հետևյալ բաժիններից.

1. Թեմայի անվանումը, ժամաքանակը

2. Նպատակները

3. Խնդիրները

4. Վերջնարդյունքները

5. Բովանդակությունը

Ծրագրում առանձնացված են կերպարվեստի պարապմունքների տարբեր տեսակները՝ դրանց համակարգված ուսուցումով , որոնք համապատասխանում են սովորողների նախասիրություններին, հետաքրքրություններին ու պահանջմունքների բավարարմանը:

Ծրագրում նշված է ընդհանուր ժամաքանակը ուսումնական տարվա համար, թեմայի վերնագիրը, տրամադրվող ժամաքանակը, նպատակները, ակնկալվող վերջնարդյունքները՝ հիմնական շեշտը դնելով սովորողի գիտելիքների,կարողունակությունների ու հմտությունների զարգացման վրա:

«ԿԵՐՊԱՐՎԵՍՏ » ԱՌԱՐԿԱՅԻ

ԾՐԱԳԻՐ

(շաբաթական՝ 2 ժամ, տարեկան՝ 68 ժամ)

Գունանկար (10 ժամ)
Նպատակը
Զարգացնել երանգային և գունային աստիճանավորմամբ պատկերվող առարկաների գունային կառուցվածքի, ձևի, ծավալի,հեռանկարչական կրճատումների, լուսաստվերների, երանգների ինքնուրույն վերլուծման և պատկերման կարողությունները:
Խնդիրներ
Ծանոթացնել հիմնական աշխատանքի համար նախանկարի կատարման առանձնահատկություններին և ընկալել օբյեկտների ձևը, կառուցվածքը, ծավալը, գույնը, ֆակտուրան, լուսաստվերը, տարածական դիրքը, փոխհարաբերությունները և հեռանկարչական կրճատումները:
Վերջնարդյունքներ
Կկարողանան ստեղծել ծավալային կոմպոզիցիա,ներկայացնել տարածության պատկերման հիմունքները (հեռանկար, հեռավորության վրա օբյեկտների փոքրացում):
Բովանդակություն
1. Նատյուրմորտ 5 ժամ • Տեղեկություն նատյուրմորտի մասին (զրույց, դիտում) 1 ժ • Նատյուրմորտ մրգերով 2 ժ • Նատյուրմորտ պարզ առարկաներով 2 ժ 2. Թեմատիկ նկարչություն 5 ժամ • Նկարների դիտում,վերլուծում 1 ժ • Գունային համադրություն 2 ժ • Հեքիաթի նկարազարդում 2 ժ

Կոմպոզիցիա (12 ժամ)
Նպատակը
Կարողանան իրականացնել կոմպոզիցիայի հիմնական միջոցների և հնարքների, գեղարվեստական ոճաձևերի ստեղծագործաբար կիրառում, կոմպոզիցիայի բոլոր տարրերի համաձայնեցվածություն, կոմպոզիցիոն կենտրոնի շեշտադրում:
Խնդիրներ
Ընկալել « Կոմպոզիցիա » հասկացությունը, որպես ստեղծագործության թեմայի գեղարվեստական նյութի, ձևի և կատարման տեխնիկական հնարքների ամբողջություն:
Վերջնարդյունքներ
Սեփական աշխատանքում կկարողանա տարբերել նյութերի մշակելու և դրանցով աշխատելու հնարքները, և պատկերման տարբեր տեխնիկաների ճիշտ կիրառումը:
Բովանդակություն
1. Ճեպանկար 4 ժամ • Տեղեկություն ճեպանկարի մասին 1 ժ • Դիմանկար 1 ժ • Բնանկար 1 ժ • Կենցաղային առարկաներ 1 ժ 2. Շենքեր և շինություններ 2 ժամ • Դիտում, քննարկում, տեղեկատվության տրամադրում 1 ժ • Ճեպանկար՝ դպրոցի շենքը 1 ժ 3. Դեկորատիվ նկարչություն 6 ժամ • Այցելություն վիրտուալ պատկերասրահ՝ դեկորատիվ աշխատանքի դիտում,վերլուծություն 2 ժ • Գործնական աշխատանք (ինքնուրույն վերաբերմունքի արտահայտում) 2 ժ • Նախշերի տարբերակների ստեղծում (քառակուսու, ուղղանկյան, շրջանի մեջ) 2 ժ

Պլեներ(Էտյուդ) (8 ժամ)
Նպատակը
Զարգացնել սիրո և հոգատար վերաբերմունքի դաստիարակում բնության նկատմամբ, տրամադրության և իրավիճակի արտահայտում գույնի, երանգի, ռիթմի և

ձևի հատկությունների օգնությամբ:
Խնդիրներ
Պատկերվող առարկաների գունային կառուցվածքի, ձևի, ծավալի, հեռանկարչական կրճատումների, լուսաստվերի, երանգների ինքնուրույն վերլուծման և պատկերման կարողությունների զարգացում :
Վերջնարդյունքներ
Կկարողանա կատարված դիտումների և ուսումնասիրությունների հիման վրա հիշողությամբ՝ նկարել բնության տեսարաններ՝ մի գույնից մյուսին անցման օգտագործումով:
Բովանդակություն
1. Բնանկար 4 ժամ • Ծանոթացում բնանկարի տեսակներին 2 ժ • Քաղաքային և գյուղական տեսարաններ 2 ժ 2. Էտյուդներ (պլեներ) 4 ժամ • Դիտում, ծանոթացում 1 ժ • Պլեներային գեղանկարչություն(Կլոդ Մոնե, Օգյուստ Ռենուար,Էդգար Դեգա) 3 ժ
Զարդանկար (10 ժամ)
Նպատակը
Սովորողներին ծանոթացնել զարդանախշի բազմաթիվ տեսակներին, ծագման և հետագա զարգացման պատմությանը, դրանց օգտագործմանը տարբեր ազգերի կերպարվեստում և ճարտարապետության մեջ:
Խնդիրներ
Ծանոթանալ պատկերազարդման և նկարազարդման առանձնահատկություններին:
Վերջնարդյունքներ
Կիմանան զարդանախշերի ստացումը պատկերների կրկնությամբ տեխնիկայի միջոցների և այլ նյութերի մասին, որոնք օգտագործվում են նկարազարդումների ժամանակ:
Բովանդակություն

Զարդանկար 10 ժամ

- Զրույց քննարկում <<Ի՞նչ է զարդանկարը>> 1 ժ
- Ծառի զարդարարական պատկերում 1 ժ
- Կենաց ծառ 2 ժամ
- Զարդանախշերի տեսակներ (կենդանական, բուսական և երկրաչափական ձևերը) 2 ժամ
- Զարդարարական աշխատանք (զարդատուփի ձևավորում) 2 ժ
- Գրքի ձևավորում զարդանկարով (գլխագիր, վերնագիր) 2 ժ

Մանրանկարչություն (8 ժամ)
Նպատակը
Ծանոթացնել մանրանկարչության ծագմանը և զարգացմանը: Հայտնի մանրանկարիչների աշխատանքների արտանկարում:
Խնդիրներ
Կոմպոզիցիայի կարևոր մասերի չափերը մեծացնել կամ փոքրացնել նկարի կենտրոնի ընդգծում լույսի և գույնի միջոցով, գլխավորի հակադրումը երկրորդականին:
Վերջնարդյունքներ
Կկարողանան արտանկարել արվեստագետների աշխատանքները և կստեղծեն սեփական աշխատանքներ: Կծանոթանան հայկական մանրանկարչությանը:
Բովանդակություն 1. Մանրանկարչություն 8 ժամ • Ծանոթացում մանրանկարչությանը 1 ժ • Տեղեկություն և վիրտուալ ցուցադրում 1 ժ • Արտանկարում 2 ժ • Սեփական մանրանկարի ստեղծում 2 ժ • Էջի պատկերազարդում 1 ժ

Հագուստի մոդելավորում (20 ժամ)
Նպատակը
Տարբեր ոճերի հագուստների մոդելավորում: Ծանոթացնել հագուստի մոդելավորման պատմությանը:Ստեղծել տարբեր ոճերի հագուստների մոդելներ:

Խնդիրներ
Տարբերել ոճերը և ստեղծել սեփական հագուստներ:
Վերջնարդյունքներ
Կնկարեն և կստեղծեն սեփական հագուստների հավաքածուն: Կիմանան նորաձևության ոճերն ու ուղղությունները:
Բովանդակություն
Հագուստի մոդելավորում 20 ժամ • Հայկական տարազ (ծանոթացում) 2 ժ • Տարազի ձևերը (կնոջ և տղամարդու)2 ժ • Հայկական տարազի գոտիներ 2 ժ • Գլխազարդ 2 ժ • Ծանոթանալ այլ երկրների հագուստներին և ստեղծել սեփականը 3 ժ • Ստեղծել տարբեր ոճի հագուստներ 3 ժ • Հագուստների էսքիզ 2 ժ • Առօրյա հագուստի ստեղծում 2 ժ • Տոնական հագուստի ստեղծում 2 ժ

Տարեվերջյան հաշվետվություն

Սովորողները ամբողջ տարվա ընթացքում կստանան ակադեմիական գիտելիքներ, կիմտանան գործնական աշխատանքների մեջ և տեսականորեն կհարստացնեն իրենց շտեմարանը:

Ծանոթացում կլինի նաև մարզի հուշակոթող համալիրներին, տեղում կանցկացվեն պլեներային կամ էտյուդ դասեր: Կծանոթանան հայ և արտասահմանյան հայտնի նկարիչների կյանքին և գործունեությանը, կարտանկարեն նրանց ամենահայտնի նկարները: Տարվա ընթացքում կմասնակցեն տարբեր ցուցահանդեսների, կարտահայտեն իրենց կարծիքները, որից ելնելով կկազմակերպվեն խմբային աշխատանքներ: Տարվա վերջում նախատեսվում է կազմակերպել ցուցահանդես, որի ընթացքում կցուցադրվեն ամբողջ տարվա կատարված աշխատանքները:

2022 թ.